

Թեամբ Տեառն արարաք օր աւուր շինութիւն ըստ մերում ուժոյ ի փառս սուրբ Աստուածածնին: Նախ եւ առաջին զտանիս եկեղեցոյն որ յոժ քակեալ քանդեալ, ապականեալ եւ աւերեալ էր ի բազում ժամանակաց՝ մինչ զի սակաւ ինչ անձրեւելով՝ զամենայն ի ներքս դառնայր հաւասար եւ կաթիլ մի ոչ մնայր յարտաքս: Եւ մեք բազում աշխատութեամբ շինեցաք զգլուխ սուրբ տաճարին: Նաեւ ժամատունն եւս աւերակ եւ բակ էր եղեալ, զորմունս եւ զգլուխն փայտաշէն արարեալ հաստատեցաք: Ապա յետ այսորիկ սկսեալ շինեցաք զձիթհանքն եւ զջրաղացն: Եւ այլ ամենայն հոգեւոր եւ մարմնաւոր պականութիւն լցաք ըստ մերում չափու»:

Այս նորոգութեանց մասին կը խօսի նաեւ Դաւրիթեցի (էջ 352), անոնց ժամանակն նշանակելով 1643, ուստի Փիլիպպոս կաթողիկոսի օրով եւ նպաստաւորութեամբ «մեծի պատրկի Զուղայեցի Խոջայ Պետրոսին, զոր մականուամբ Բղուզ Պետրոս ասէին»:

ԺԳ. Յովհաննէս արքեպիսկոպոս Տաքելի: Իր հրամանաւ գրած է Սարգիս աշխարհական 1635ին ի Խոտանան Կանոնադիրք մը⁸ եւ կը խնդրէ յիշել «զստացաւզ դրոցս Յովաննէս արհեպիսկոպոսն ի յաթոռն Ստաթէի, որ էր սա ազգական եւ մօտընտի Մովսէս կաթողիկոսին. որ եւ ձեռնադրեաց եւ կացոյց զսայ ի սուրբ աթոռս» իբրեւ աթո-

⁸ Ձեռ. էջմ. 2635: